Սիպիլ

Տեսիլքներ

Մոխիրներու և փուլերու կույտին մեջտեղ,
Ջոր միգամած շամանդաղով սուգը կ՝օծե,
Ի՜նչ տեսիլքներ սև հուշերով լեցված ահեղ,
Ի՜նչ երազներ, ի՜նչ պատրանքներ, հույսեր բոցեղ:

Հոն աճյունին տակ կ՝երևան շենքեր փարթամ,
Եվ պարտեզներ, և ցորեններ կուռ ոսկեգեղ,
Ճերմակ ձիով կտրիճներու ձևեր տարտամ
Աչքին առջև կը թևածեն ամպերու պես:

Հուսկ խավարը, մեծ չղջիկ մը թևատարած,
Կը սավառնի աչքիս առջև համայնակուլ
Դագաղ մըն է բոլոր աշխարհք և ես հառած
Աղջամուղջին, կը մաքառիմ. պայքար ամո՜ւլ...

Հյուսիսայգներ լուսափողփող ինձ կ՝երևան,
Արտևաններ կանանչ, կապույտ բլլուրներով.
Արծիվները բույնին մեջ են աներկեվան,
Հայրն ու որդին մոր գրկին մեջ՝ սիրագորով:

Հետո դեմքեր կը շառաչեն ու կը պայթին.
Մարդասպան սուր մը կը հածի ամենուրեք.
Հեծեծանքներ կը հաջորդեն խաղին, կայթին,

Ու լալյուններ, ցավի ճիչեր՝ գիշեր ցերեկ:

Ու կը տեսնեմ հեք կիներու թափոր մ՚ամբավ.
Սև լաչակով կուգան կ՚անցնին: Վա՜խ, թըշվառներ,

Անոթի են ու խոշտանգված, մերկ ու ծարավ,
Արյուն արցունք լալով կ՚իյնան հոն կիսամեռ:

Ուրիշ թափոր մըն ալ անվերջ և անըսպառ,
Մանուկներու ծով մ՚ալեկոծ փրփուր-փրփուր,
Ջոր չար հով մը կը մտրակե անգըթաբար
Ու կը թափե մեծ անդունդին փոսը թափուր:

Հանկարծ շող մը կուռ խավարեն, բոցեղ, հըրթիռ,
Կը բեկբեկի, դուրս կը սուրա եթերին մեջ,
Ամեն կողմե կայծկլտուքներ, լույս և հայթիռ,
Բյուր փայլակներ կը նըշուլեն, հրդե՜հ անվերջ:

Ու կը տեսնեմ նորեն պարը զրկյալներուն.
Փարատած է հիմա մեգը անոնց ճակտին.
Ծիածան մը կը պըսակե զանոնք հեռուն,
Ջըվարթ դեմքեր կը փողփողին ու կը ժպտին:

Արշալույսն է որ կը ծագի հորիզոնեն,
Անո՛ւշ արև, քու լույսիդ մեջ սուգը չ՚ապրիր,
Եվ դժբախտներն ու զրկյալներն ըզքեզ կ՚օրհնեն.
Արդարությո՛ւնն ես դուն հաղթող միշտ անխըտիր: